ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 2

«ԵՊՀ-ԳՀԽԾՁԲ-24/26» ծածկագրով գնանշման հարցման միջոցով գնման գործընթացի գնահատող հանձնաժողովի նիստի

Գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ 12.06.2023թ. ժամը 16:30-ին էլեկտրոնային գնումների www.armeps.am կայքի միջոցով

**Մասնակցում էին՝**

| | |
|---|---|
| Հանձնաժողովի նախագահ՝ | Դ. Հովհաննիսյան /գնահատող/ |
| Հանձնաժողովի անդամներ՝ | Դ. Կարախանյան /գնահատող/ |
| | Կ. Շարոյան /գնահատող/ |
| | Վ. Ենգիդունյան /բացող/ |
| | Թ. Համբարձումյան /բացող/ |
| Հանձնաժողովի քարտուղար՝ | Ա. Թաշչյան /քարտուղար/ |

1. **Տեղեկատվություն օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից՝ հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի հիմնավորումների մասին.**

1.1 Սույն ընթացակարգի հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի վերաբերյալ հիմնավորումներ չեն ներկայացվել:

**2. Տեղեկատվություն հայտեր ներկայացրած մասնակիցների մասին.**

2.1 «ԵՊՀ» Հիմնադրամի կողմից էլեկտրոնային եղանակով կազմակերպված սույն գնման ընթացակարգին հայտեր են ներկայացրել հետևյալ կազմակերպությունները.

| Հ/Հ | Մասնակիցների անվանումները | Էլ. փոստ |
|---|---|---|
| 1 | ԼԻԼ ՌՈՒԶ ՍՊԸ | LIL-RUZ@yandex.ru |
| 2 | ԱՁ Վահրամ Կնյազյան | knyazjanvvs@mail.ru |
| 3 | Գեղարքունիք Նաիրի ՍՊԸ | gexarquniqnairi@mail.ru |
| 4 | ՏԻԳԱ ԻՆԴԱՍԹՐԻԶ ՍՊԸ | tigaindus@gmail.com |

**3. Տեղեկատվություն նախահաշվային գնի և յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գնի մասին.**

3.1 Մասնակիցները ներկայացրել են հետևյալ գնային առաջարկները.

| Չ/Հ | Չափաբաժնի անվանումը | Գնման գինը, ՀՀ դրամ | Մասնակիցների անվանումները | Յուրաքանչյուր մասնակցի հայտով առաջարկված գինը, ՀՀ դրամ | |
|---|---|---|---|---|---|
| | | | | Առանց ԱԱՀ | Ընդամենը |
| 1 | ԵՊՀ որոշ աշխատասենյակների և լսարանների վերանորոգման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության խորհրդատվական ծառայություններ | 999867 | ԼԻԼ ՌՈՒԶ ՍՊԸ | 80000 | 80000 |
| | | | ՏԻԳԱ ԻՆԴԱՍԹՐԻԶ ՍՊԸ | 189000 | 189000 |
| | | | ԱՁ Վահրամ Կնյազյան | 500000 | 500000 |
| | | | Գեղարքունիք Նաիրի ՍՊԸ | 700000 | 700000 |

*Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:*

**4. Տեղեկատվություն հայտերի գնահատման գործընթացի կասեցման և հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման ժամանակացույցը հաստատելու մասին.**

4.1 Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ կետի 21-րդ ենթակետը՝ կասեցնել գնահատման գործընթացը և հայտերի գնահատման համար հանձնաժողովի նիստը հրավիրել ս.թ. հունիսի 26-ին ժամը 10:00-ին:

**Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:**

***Գնահատող հանձնաժողովի***

*Նախագահ՝* Դ. Հովհաննիսյան

անդամներ՝ Դ. Կարախանյան

Կ. Շարոյան

Վ. Ենգիդունյան

Թ. Համբարձումյան

քարտուղար՝ Ա. Թաշչյան

**Գնահատող հանձնաժողովի նիստը շարունակվեց 26.06.2024թ. ժամը 10:00-ին**

**Մասնակցում էին՝**

Հանձնաժողովի նախագահ՝ Դ. Հովհաննիսյան /գնահատող/

Հանձնաժողովի անդամներ՝ Դ. Կարախանյան /գնահատող/

Կ. Շարոյան /գնահատող/

Վ. Ենգիդունյան /բացող/

Թ. Համբարձումյան /բացող/

Հանձնաժողովի քարտուղար՝ Ա. Թաշչյան /քարտուղար/

**5. Տեղեկատվություն յուրաքանչյուր մասնակցի հայտերի կազմման և ներկայացման՝ հրավերի պահանջներին համապատասխանության, հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին.**

5.1 «ԼԻԼ-ՌՈՒՉ» ՍՊ ընկերության և «ՏԻԳԱ ԻՆԴԱՍԹՐԻԶ» ՍՊ ընկերության կողմից ներկայացված հայտերում փաստաթղթերը առկա են և կազմվել են հրավերով սահմանված պահանջներին համապատասխան: Վերոնշյալով պայմանավորված, գնահատող հանձնաժողովը ղեկավարվելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի 42-րդ կետի առաջին պարբերությունով, որոշեց վերջիններիս կողմից ներկայցված հայտերը գնահատել բավարար:

***Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:***

5.2 ՎԱՀՐԱՄ ԿՆՅԱԶՅԱՆ Ա/Ձ-ի կողմից ներկայացված փաստաթղթերը չեն համապատասխանում հրավերով սահմանված պահանջներին, մասնավորապես՝

- *Բացակայում է հավելված 1.3-ը՝* ***ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ «Մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշին համապատասխանության մասին,*** ինչպես նաև պետք է ներկայացվի Նախկինում կատարված պայմանագիրը որի շրջանակներում մատուցված ծառայությունների ծավալը (կամ հանրագումարային ծավալը)՝ գումարային արտահայտությամբ, **պակաս չէ գնման գնից**: Ընդ որում առնվազն մեկ պայմանագրի շրջանակում մատուցված աշխատանքների ծավալը գումարային արտահայտությամբ պետք է **պակաս չլինի գնման գնի հիսուն տոկոսից** և Պայմանագրերի պատշաճ կատարումը հավաստող ակտի (հանձնման-ընդունման արձանագրություն և այլն) պատճենը կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստումը:
- *Բացակայում է Հավելված 1.4-ը՝* ***ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ մասնակցի կողմից առաջարկվող հիմնական աշխատակազմի մասին,*** ինչպես նաև վերջինովս պահանջվում է ***«ինժեներատեխնիկ առնվազն 1 հոգի՝ բարձրագույն կրթությամբ և առնվազն 3 տարվա մասնագիտական աշխատանքային փորձով»*** *և ներկայացված աշխատակազմում ընդգրկված մասնագետի* ***հաստատված գրավոր համաձայնությունը՝ իրականացվելիք աշխատանքներում վերջիններիս ներգրավվելու մասին, աշխատանքային ստաժը,*** *ինչպես նաև մասնագետի* ***անձնագրերի և որակավորումը հավաստող փաստաթղթերի (աշխատանքային գրքույկ, տեղեկանք, դիպլոմ, վկայագիր, հավաստագիր և այլն)*** *պատճենները:*

***Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:***

5.3 «Գեղարքունիք Նաիրի» ՍՊ ընկերության կողմից ներկայացված փաստաթղթերը չեն համապատասխանում հրավերով սահմանված պահանջներին, մասնավորապես՝

- *Բացակայում է Հավելված 1.4-ով՝ ներկայացված աշխատակազմում ընդգրկված մասնագետի* ***աշխատանքային ստաժը հավաստող փաստաթղթերի (աշխատանքային գրքույկ, տեղեկանք և այլն)*** *պատճենները:*

***Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:***

**6. Տեղեկատվություն հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման ժամանակացույցը հաստատելու մասին.**

6.1. Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետը՝ կասեցնել գնահատման գործընթացը և հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել ս.թ. հունիսի 28-ին ժամը 11:00-ին:

***Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:***

***Գնահատող հանձնաժողովի***

*Նախագահ՝* Դ. Հովհաննիսյան

անդամներ՝ Դ. Կարախանյան

Կ. Շարոյան

Վ. Ենգիդունյան

Թ. Համբարձումյան

քարտուղար՝ Ա. Թաշչյան

**Գնահատող հանձնաժողովի նիստը շարունակվեց 28.06.2024թ. ժամը 11:00-ին**

**Մասնակցում էին՝**

| | |
|---|---|
| *Հանձնաժողովի նախագահ՝* | *Դ. Հովհաննիսյան /գնահատող/* |
| *Հանձնաժողովի անդամներ՝* | *Դ. Կարախանյան /գնահատող/* |
| | *Կ. Շարոյան /գնահատող/* |
| | *Վ. Ենգիդունյան /բացող/* |
| | *Թ. Համբարձումյան /բացող/* |
| *Հանձնաժողովի քարտուղար՝* | *Ա. Թաշչյան /քարտուղար/* |

**7.Տեղեկատվություն գնման գործընթացի գնահատման ընթացքում արձանագրված անհամապատասխանությունների շտկման և/կամ չշտկման մասին.**

7.1 Գնահատող հանձնաժողովը արձանագրեց, որ «Գեղարքունիք Նաիրի» ՍՊ ընկերության կողմից սահմանված ժամկետում ներկայացվել են սույն արձանագրության 5.3 ենթակետով պահանջվող փաստաթղթերը: Վերոնշյալով պայմանավորված, գնահատող հանձնաժողովը ղեկավարվելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի 42-րդ կետի առաջին պարբերությունով, որոշեց վերջիններիս կողմից ներկայացված հայտերը գնահատել բավարար:

***Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:***

7.2 Գնահատող հանձնաժողովը արձանագրեց, որ ՎԱՀՐԱՄ ԿՆՅԱԶՅԱՆ Ա/Ձ-ի կողմից սահմանված ժամկետում չեն ներկայացվել սույն արձանագրության 5.2 ենթակետերով պահանջվող փաստաթղթերը: Վերոնշյալով պայմանավորված, գնահատող հանձնաժողովը ղեկավարվելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի 42-րդ կետի առաջին պարբերությունով, որոշեց վերջինիս կողմից ներկայացված հայտը ***«Մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշի և «Աշխատանքային ռեսուրսներ» որակավորման չափանիշի մասով*** ոչ գնային չափորոշիչները հիմնավորող փաստաթղթերը գնահատել զրո:

***Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:***

**8. Տեղեկատվություն յուրաքանչյուր մասնակցի ոչ գնային չափանիշների գնահատման վերաբերյալ**

8.1 1-ին չափաբաժնի համար ոչ գնային չափորոշիչները հիմնավորող փաստաթղթերը գնահատվել են հետևյալ կերպ.

| Ոչ գնային չափանիշներ | | Մասնակիցների անվանումները | | | |
|---|---|---|---|---|---|
| **Գնահատման չափանիշը** | **Առավելագույն միավորը** | «ԼԻԼ-ՌՈՒՁ» ՍՊԸ | ՏԻԳԱ ԻՆԴԱՍԹՐԻՁ ՍՊԸ | ՎԱՀՐԱՄ ԿՆՅԱԶՅԱՆ Ա/Ձ | Գեղարքունիք Նաիրի» ՍՊԸ |
| **Մասնագիտական փորձառություն** | **40** | 40 | 40 | 0 | 40 |
| **Աշխատանքային ռեսուրսներ** | **30** | 30 | 30 | 0 | 30 |
| **Ընդամենը** | **70** | 70 | 70 | 0 | 70 |

8.1.1 Չափաբաժին 1-ի գնային պայմանը գնահատվել է հետևյալ կարգով /համաձայն հրավերով սահմանված բանաձևի/

| Գնային պայմանի գնահատականը | | | |
|---|---|---|---|
| **Մասնակիցների անվանումները** | | | |
| «ԼԻԼ-ՌՈՒՁ» ՍՊԸ | ՏԻԳԱ ԻՆԴԱՍԹՐԻՁ ՍՊԸ | ՎԱՀՐԱՄ ԿՆՅԱԶՅԱՆ Ա/Ձ | Գեղարքունիք Նաիրի» ՍՊԸ |
| 30 | 12,7 | 4,8 | 3,4 |

**Մասնակիցների հայտերը գնահատվել են հետևյալ կարգով՝**

ա. նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցի ֆինանսական առաջարկը գնահատվում է երեսուն միավոր, իսկ մյուս մասնակիցների ֆինանսական առաջարկներին տրվող միավորները հաշվարկվում են հետևյալ բանաձևով՝

ԳՄ= ՆԳ X 30/ԳԳ,

որտեղ՝

ԳՄ-ն գնային առաջարկին տրվող միավորն է,

ՆԳ-ն նվազագույն գինն է,

ԳԳ-ն գնահատվող մասնակցի առաջարկած գինն է,

բ. բավարար գնահատված յուրաքանչյուր մասնակցին տրվող գնահատականը հաշվարկվում է հետևյալ բանաձևով՝

ՄԳ = (ԳՄ X 0.7) + (ՏԱ X 0.3),

որտեղ՝

ՄԳ-ն մասնակցին տրվող գնահատականն է,

ԳՄ-ն մասնակցի գնային առաջարկին տրված միավորն է,

ՏԱ-ն մասնակցի որակավորման հատկանիշներին և տեխնիկական առաջարկին տրված միավորն է.

ընտրված մասնակից է ճանաչվում այն մասնակիցը, որին տրված գնահատականը (ՄԳ) ամենաբարձրն է.

| **Մասնակիցներին տրված ընդհանուր գնահատականը** | | | |
|---|---|---|---|
| **Մասնակիցների անվանումները** | | | |
| «ԼԻԼ-ՌՈԻՁ» ՍՊԸ | ՏԻԳԱ ԻՆԴԱՍԹՐԻՁ ՍՊԸ | ՎԱՀՐԱՄ ԿՆՅԱԶՅԱՆ Ա/Ձ | Գեղարքունիք Նաիրի» ՍՊԸ |
| 42 | 29,89 | 3,36 | 23,38 |

*Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:*

**9 Տեղեկատվություն ընտրված և այդպիսին չճանաչված մասնակիցների մասին**

9.1 Գնահատող հանձնաժողովը, հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածը, բավարար գնահատված հայտերից որոշեց ընտրված և այդպիսին չճանաչված մասնակիցներից՝

| Հ/Հ | Ընտրված Մասնակցի անվանում | Այդպիսին չճանաչված Մասնակցի անվանում |
|---|---|---|
| 1 | «ԼԻԼ-ՌՈԻՁ» ՍՊԸ | ՏԻԳԱ ԻՆԴԱՍԹՐԻՁ ՍՊԸ |
| | | Գեղարքունիք Նաիրի» ՍՊԸ |
| | | ՎԱՀՐԱՄ ԿՆՅԱԶՅԱՆ Ա/Ձ |

*Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:*

**10. Տեղեկատվություն գնահատման արդյունքների ամփոփման մասին**

10.1 Հաստատել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը՝ ըստ որի «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն անգործության ժամկետ սահմանել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 10-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը, որից հետո ընտրված մասնակցին էլեկտրոնային ձևով գնումների կազմակերպման կարգին համապատասխան՝ ARMEPS համակարգով, ներկայացնել պայմանագիր կնքելու առաջարկ:

*Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:*

***Գնահատող հանձնաժողովի***

| | | |
|---|---|---|
| *Նախագահ՝* | Դ. Հովհաննիսյան | |
| անդամներ՝ | Դ. Կարախանյան | |
| | Կ. Շարոյան | |
| | Վ. Ենգիդունյան | |
| | Թ. Համբարձումյան | |
| քարտուղար՝ | Ա. Թաշչյան | |